

3130

ԸՆԿԵՐ ԻՎԱՆՈՎԻ  
ՆԵՄՈՒԿԵ  
ՅԵՎ.  
ԸՆԿԵՐ ԱՏՎԱՒՆԻ  
ՊԱՏՅՈՒԽԵՆՔ

«ՈԼՅԵՎԻԿ» ՀՐԱՏԵՐԵԿՑՈՒԹՅՈՒՆ  
ԹՈՒՑԱՎ. ԴԱՆ — 1938

ՀԿ 33  
Ը - 47

Ar. I. 3K33  
C-47

2 JUN 2005

Գրության մեջ բարությունը կ լինի, միացնել

14 NOV 2009

ԸՆԿԵՐ ԻՎԱՆԱՎԻ ՆԱՄԱԿԸ  
ՅԵՎ

ԸՆԿԵՐ ԱՏԱԼԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ



ՈՂԱՍՈՎ ԴՈՒ-1938  
ԹԱՎԱՐԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՀԱՅԱԿԱՆ «ԲՈԼՏԵՎԿԻ» ՀՐԱՄԱԿՎՈՒԹՅՈՒՆ

12 FEB 2014

3130

## Ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ

Կուրսի մարզի Մանտուրովսկի ռա-  
յոնի ՀԱԿՅԵՄ ռայկովի շատային  
պրոպագանդիս Խվան Ժիլիպովիչ  
ԽՎ.Ա.ԽՈՎ.ԻՅ.



2043-40

Редактор П. Чатыньян  
Техред Л. Жданович      Корректор М. Кеворкьян

Издание № 13/39. Сдано в набор 3 марта 1938 г., под-  
писано в печать 17 марта 1938 г. Формат 44x62|16.  
Объем 58 печ. л. Тираж 5.000. Упомянут И-754

Типография Ростовского областного армянского изда-  
тельства „Большевик“ (Ростов на-Дону, Ворошилов-  
ский пр. 27). Заказ № 548.

Թանկագին ընկեր Ստալին, թախանձագին  
խնդրում եմ բացատրել ինձ հետևյալ հարցը.  
մեզ մոտ՝ տեղերում, և հենց կոմյերիտմիու-  
թյան մարզկոմում յերկու տեսակ հասկացո-  
ղություն կա սոցիալիզմի վերջնական հաղ-  
թանակի մասին մեր յերկրում, այսինքն՝  
շփոթում են հակասությունների առաջին  
խումբը յերկրորդի հետ Ձեր աշխատություն-  
ներում—սոցիալիզմի ճակատագրի մասին  
Խորհրդային Միության մեջ՝ խոսքը վերա-  
բերում ե հակասությունների յերկու խմբե-  
րին—ներքին և արտաքին:

Հակասությունների առաջին խմբի մասին,  
հասկանալի յե, վոր մենք դրանք լուծել ենք—  
սոցիալիզմը յերկրի ներսում հաղթանակել ե:  
Յես ուզում եմ պատասխան ստանալ հա-  
կասությունների յերկրորդ խմբի մասին,

այսինքն՝ սոցիալիզմի յերկրի և կապիտալիզմի միջև յեղած հակասությունների մասին։ Դուք մատնանշում եք, վոր սոցիալիզմի վերջնական հաղթանակը նշանակում ե արտաքին հակասությունների լուծում, լրիվ ապահովում ե ինտերվենցիայից, հետևապես և կապիտալիզմի ռեստավրացիայից, իսկ հակասությունների այդ խումբը լուծելի յեմիայն բոլոր յերկրների բանվորների ջանքերով։

Այս, հենց ընկեր Լենինն ել սովորեցնում եր մեզ—«վերջնականապես հաղթել կարելի յեմիայն համաշխարհային մասշտաբով, միայն բոլոր յերկրների բանվորների համատեղ ջանքերով»։

Լինելով ՀԿՅԵՄ մարզկոմի շտատային պրոպագանդիստների սեմինարում, իսս, հիմնվելով Ձեր աշխատությունների վրա, ասացի, վոր սոցիալիզմի վերջնական հաղթանակը կարող է լինել համաշխարհային մասշտաբով, բայց մարզկոմի աշխատողները—Ուրոժենկոն (մարզկոմյերի տմիության առաջնագործուղար) և Կազելկովը (պրոպագանդի հրահանգիչ) իմ յելութը վորակում են վորպես տրոցկիստական վոտնձգություն։

Յես սկսեցի կարդալ նրանց քաղվածքներ Ձեր աշխատություններից այդ հարցի վերաբերյալ, բայց Ուրոժենկոն առաջարկեց ինձ փակել յերեքհատորյակն ասելով, վոր «ընկեր Ստալինն ասում եր 1926 թվին, յերբ մենք դեռ չունեյինք վերջնական հաղթանակ, իսկ հիմա՝ մենք արդեն ունենք 1938 թիվը, և հիմա ունենք այդ հաղթանակը և մեզ այժմ վայել չի մտածել ինտերվենցիայի և ուստավրացիայի մասին»։ Այնուհետև նա ասում ե—«մենք այժմ ունենք սոցիալիզմի վերջնական հաղթանակ և լրիվ յերաշխիք ունենք ինտերվենցիայից և կապիտալիզմի ռեստավրացիայից»։ Այդպիսով ինձ համարեցին տրոցկիզմի արբանյակ, հանեցին պրոպագանդիստական աշխատանքից և հարցը դրին կոմյերիտամիության մեջ մնալու մասին։

Խնդրում եմ, ընկեր Ստալին, բացատրել—մենք ունենք արդյոք սոցիալիզմի վերջնական հաղթանակ, թե առաջմ դեռ վոչ։ Գուցե, յես դեռ չեմ գտել այդ հարցին վերաբերող լրացուցիչ ժամանակակից նյութ արդիականության վոփոխութերի կապակցությամբ։

Յես նաև համարում եմ Ուրոժենկոյի

այն հայտարարությունը հակաբողեկիցան,  
թև ընկեր Ստալինի աշխատություններն այդ  
հարցի վերաբերյալ մի փոքր հնացել են:  
Յեվ ճիշտ են արդյոք վարպետ մարզկոմի  
աշխատողները, համարելով ինձ տրոցկիստ:  
Դա ինձ համար շատ վիրավորական ե և ան-  
պատվարեր:

Խնդրում եմ, ընկեր Ստալին, մի մերժեք  
իմ խնդիրը և պատասխան տվեք հետեւյալ  
հասցեյով. Կուրսիկի մարզի Մանտուրովսկի  
ուլոն, 1-ին Զասեմսկի գյուղինորհուրդ, Իվան  
Ֆիլիպովիչ ԻՎԱՆՈՎԻՆ.

Ի. ԻՎԱՆՈՎ

18—I—1938 թիվ

## Պատասխան ընկ. Իվան Ֆիլիպովիչ ԻՎԱՆՈՎԻՆ

Դուք, ի հարկե, իրավացի յեք, ընկեր Իվա-  
նով, խսկ Ձեր գաղափարական հակառակորդ-  
ները, այսինքն ընկերներ Ուրոժենկոն և  
Կազելկովը—անիրավացի:

Յեվ ահա թե ինչու:

Կասկած չկա, զոր մի յերկրում սոցիա-  
լիզմի հաղթանակի հարցը, տվյալ դեպքում  
մեր յերկրում—ունի ՅԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐ կող-  
մեր:

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի  
հարցի ԱՌԱՋԻՆ կողմն ընդգրկում ե դասա-  
կարգերի վոխհարաբերությունների պրոբ-  
լեմը մեր յերկրի ներսում: Դա—ՆԵՐՔԻՆ  
հարաբերությունների բնագավառն ե: Կարող  
ե արդյոք մեր յերկրի բանվոր դասակարգը  
հաղթահարել գյուղացիության և իր միջն յե-  
ղած հակասություններն ու կարգավորել նրա  
հետ զաշինք, համագործակցությունն: Կարող  
ե արդյոք մեր յերկրի բանվոր դասակարգը,  
մեր գյուղացիության հետ դաշինք կապած,

յարդել մեր յերկրի բուրժուազիային, խլել նրանից հողը, գործարանները, շախտերը և ալին, և կառուցել իր ուժերով նոր անդասակարգ հասարակություն, լրիվ սոցիալիստական հասարակություն։

Դրանք են մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի ԱՌԱՋԻՆ կողմի հետ կապված պրոբլեմները։

Լենինիզմն այդ պրոբլեմներին դրական պատասխան ե տալիս։ Լենինը սովորեցնում է, վոր «Մենք ՈՒՆԵՆՔ ԲՈԼՈՐ ԱՆՀՐԱԺԵՆՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԼՐԻՎ ՍՈՅՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ»։ Նշանակում ե, մենք կարող ենք, և պարտավոր ենք սեփական ուժերով հաղթել մեր բուրժուազիային և կառուցել սոցիալիստական հասարակություն։ Տրոցկին, Զինովյեվը, Կամեները և մյուս պարոնները, վորոնք հետո դարձան ֆաշիզմի լրաեսները և գործականները, ժխտում եյին սոցիալիզմի կառուցման հնարավորությունը մեր յերկրում, քանի դեռ սոցիալիստական հեղափոխությունը նախապես չի հաղթանակել նաև մյուս յերկրներում, կապիտալիստական յերկրներում։ Այդպես ե գործը մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի ԱՌԱՋԻՆ կողմի նկատմամբ։

Եյության ուղում եյին դարձնել մեր յերկրի դեպի հետ, դեպի բուրժուական զարգացման ուղին, ծածկելով իրենց ուրացողությունը կեղծ վկայակոչություններով «հեղափոխության հաղթանակի» նկատմամբ մյուս յերկրներում։ Հենց դրա մասին ել գնում եր վեճը մեր կուսակցության և այդպարոնների միջև։ Մեր յերկրի զարգացման հետագա ընթացքը ցույց տվեց, զոր կուսակցությունն իրավացի յեր, իսկ Տրոցկին և կոմպանիան անիրավացի եյին, քանի վորայդ ժամանակամիջոցում մենք կարողացանք վերացնել մեր բուրժուազիային, կարգավորել յեղբայրական համագործակցությունը մեր գյուղացիության հետ և կառուցել հիմնականում սոցիալիստական հասարակություն, չնայած սոցիալիստական հեղափոխության հաղթանակի բացակայությանը մյուս յերկրներում։

Այդպես ե գործը մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի ԱՌԱՋԻՆ կողմի նկատմամբ։

Յես կարծում եմ, ընկեր Իվանով, վոր Զերվեանը ընկ. ընկ. Ուրոժենկոյի և Կազելկովի հետ վերաբերում ե հարցի վոչ այդ կողմին։

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի  
 հարցի ՅԵՐԿՐՈՐԴ կողմն ընդգրկում ե փոխ-  
 հարաբերությունների պրոբլեմը մեր յերկրի  
 և ուրիշ յերկրների, կապիտալիստական յեր-  
 կրների միջև փոխհարաբերությունների պրոբ-  
 լեմը մեր յերկրի բանվոր դասակարգի և  
 ուրիշ յերկրների բուրժուազիայի միջների Դա-  
 ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱԳԱՅԻՆ հարաբերություն-  
 ների բնագավառն ե։ Կարող ե արդյոք մի  
 յերկրի հաղթանակած սոցիալիզմը, ունենա-  
 լով իր շրջապատում բազմաթիվ ուժեղ  
 կապիտալիստական յերկրներ, միանգամայն  
 ապահովված համարել իրեն ուազմական ներ-  
 խուժման (ինտերվենցիայի) վաճանգից և  
 հետեվապես կապիտալիզմի վերականգն-  
 ման փորձերից մեր յերկրում։ Կարող են  
 արդյոք մեր բանվոր դասակարգը և մեր  
 գյուղացիությունը սեփական ուժերով, ա-  
 ռանց կապիտալիստական յերկրների բան-  
 վոր դասակարգի լուրջ ոգնության, հաղթա-  
 հարել մյուս յերկրների բուրժուազիային  
 նույնապես, ինչպես նրանք հաղթահարել են  
 իրենց բուրժուազիային։ Ուրիշ կերպ ասած,  
 կարելի յե արդյոք համարել սոցիալիզմի  
 հաղթանակը մեր յերկրում վերջնական, այ-

սինքն ուազմական հարձակման վտանգից և  
 կապիտալիզմի վերականգնման փորձերից  
 ազատ, նկատի ունենալով, վոր սոցիալիզմի  
 հաղթանակը գոյություն ունի միայն մի  
 յերկրում, իսկ կապիտալիստական շրջապա-  
 տումը շարունակում ե գոյություն ունե-  
 նալ

Դրանք են մեր յերկրում սոցիալիզմի հաղ-  
 թանակի հարցի ՅԵՐԿՐՈՐԴ կողմի հետ կապ-  
 ված պրոբլեմները։

Լենինիզմը պատասխանում ե այդ պրոբ-  
 լեմներին բացասաբար։ Լենինիզմը սովորեց-  
 նում ե, վոր «սոցիալիզմի վերջնական հաղ-  
 թանակը, բուրժուական հարաբերություն-  
 ների ուստավրացիայից լրիվ ապահովու-  
 թյուն ունենալու իմաստով, հնարավոր ե  
 միայն միջազգային մասշտաբով» (Նայիր  
 Համ Կ(բ)Կ 14-րդ կոնֆերանսի հայտնի բա-  
 նաձեվը)։ Դա նշանակում ե, վոր միջազգա-  
 յին պրոլետարիատի լուրջ ոգնությունն ե  
 հանդիսանում այն ուժը, առանց վորի չի  
 կարող վճռվել մի յերկրում սոցիալիզմի  
 վերջնական հաղթանակի խնդիրը։ Դա, իհար-  
 կե, չի նշանակում, վոր մենք ինքներս պետք  
 ե նստենք ձեռներս ծալած, գրսից ոգնու-

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի ՅԵՐԿՐՈՐԴ կողմն ընդգրկում ե փոխ-  
հարաբերությունների պրոբլեմը մեր յերկրի և ուրիշ յերկրների, կապիտալիստական յեր-  
կրների միջև փոխհարաբերությունների պլոտ-  
լեմը մեր յերկրի բանվոր դասակարգի և  
ուրիշ յերկրների բուրժուազիայի միջեվ։ Դա  
ԱԲՏԱՔԻՆ ՄԻՋԱՋԱՑԻՑԻՆ հարաբերություն-  
ների ընագավառն ե։ Կարող ե արդյոք մի  
յերկրի հաղթանակած սոցիալիզմը, ունենա-  
լով իր շրջապատում բազմաթիվ ուժեղ  
կապիտալիստական յերկրներ, միանդամայն  
ապահովված համարել իրեն ուազմական ներ-  
խուժման (ինտերվնցիայի) վտանգից և  
հետեւապես կապիտալիզմի վերականգն-  
ման փորձերից մեր յերկրում։ Կարող են  
արդյոք մեր բանվոր դասակարգը և մեր  
զյուղացիությունը սեփական ուժերով, ա-  
ռանց կապիտալիստական յերկրների բան-  
վոր դասակարգի լուրջ ոգնության, հաղթա-  
հարել մյուս յերկրների բուրժուազիային  
նույնպես, ինչպես նրանք հաղթահարել են  
իրենց բուրժուազիային։ Ուրիշ կերպ ասած,  
կարելի յե արդյոք համարել սոցիալիզմի  
հաղթանակը մեր յերկրում վերջնական, այ-

սինքն ռազմական հարձակման վտանգից և  
կապիտալիզմի վերականգնման փորձերից  
ազատ, նկատի ունենալով, վոր սոցիալիզմի  
հաղթանակը գոյություն ունի միայն մի  
յերկրում, իսկ կապիտալիստական շրջապա-  
տումը շարունակում ե գոյություն ունե-  
նալ:

Դրանք են մեր յերկրում սոցիալիզմի հաղ-  
թանակի հարցի ՅԵՐԿՐՈՐԴ կողմի հետ կապ-  
ված պրոբլեմները։

Լենինիզմը պատասխանում ե այդ պրոբ-  
լեմներին բացասաբար։ Լենինիզմը սովորեց-  
նում ե, վոր «սոցիալիզմի վերջնական հաղ-  
թանակը, բուրժուազիան հարաբերություն-  
ների ուստափացիայից լրիվ ապահովու-  
թյուն ունենալու իմաստով, նարակոր ե  
միայն միջազգային մասշտաբով» (Նայիր  
Համ Կ(բ)Կ 14. բդ կոնֆերանսի հայտնի բա-  
նաձեկը), Դա նշանակում ե, վոր միջազգա-  
յին պրոլետարիատի լուրջ ոգնությունն ե  
հանդիսանում այն ուժը, առանց վորի չի  
կարող վճռվել մի յերկրում սոցիալիզմի  
վերջնական հաղթանակի խնդիրը։ Դա, իհար-  
կե, չի նշանակում, վոր մենք ինքներս պետք  
ե նստենք ձեռներս ծալած, դրսից ոգնու-

թյուն սպասելով։ Ընդհակառակը, միջազգա-  
յին պղողետարիատի կողմից սպասվելիք ոգ-  
նությունը պետք է միանա մեր այն աշխա-  
տանքի հետ, վոր մենք տանում ենք մեր  
յերկրի պաշտպանության ուժեղացման, Կար-  
միր բանակի և կարմիր նավատորմիդի ու-  
ժեղացման, և վողջ յերկիրը գորահավաքե-  
լու ռազմական հարձակումների և բուրժուա-  
կան հարաբերությունների ուստավրացիայի  
փորձերի դեմ պայքարելու համար։

Այս թե ինչ ե ասում այդ մասին լենինը.

«Մենք ապրում ենք վոչ միայն մի պե-  
տության մեջ, այլև պետությունների սիս-  
տեմում, և Խորհրդային հանրապետության  
գոյությունն իմպերիալիստական պետու-  
թյունների կողքին յերկարատեղ ժամա-  
նակ աներեվակայելի յե։ Վերջիվերջո  
կամ մեկը, կամ մյուսը կհաղթի։ Իսկ  
մինչեվ այդ վախճանը կգա, մի շարք  
ամենասոսկալի բաղխումները Խորհրդային  
հանրապետության և բուրժուական պե-  
տությունների միջեղ անխուսափելի յեն։  
Դա նշանակում է, վոր տիրող դասակար-  
գը, պրոլետարիատը, յեթե միայն նա  
ուզում է և պիտի տիրապետի, պետք է

ապացուցի այդ նաև իր ռազմական կազ-  
մակերպությամբ» (հատոր XXIV, եջ 122)։  
Յեվ այնուհետեւ.

«Մենք շրջապատված ենք մարդկան-  
ցով, դասակարգերով, կառավարություն-  
ներով, վորոնք բացարձակ ատելություն-  
են արտահայտում դեպի մեզ։ Պետք է հի-  
շել, վոր ամեն ձեզի ներխուժման վտան-  
գից մենք միշտ մազից ենք կախված»  
(հատոր XXVII, եջ 117)։

Ասված է սուր և ամուր, բայց ազնվորեն  
և ճշմարիտ, առանց գունավորումների, ինչ-  
պես կարողանում եր ասել լենինը։

Այդ նախադրյալների հիման վրա Ստալինի  
«լենինիզմի հարցերը» աշխատության մեջ  
ասված ե.

«Սոցիալիզմի վերջնական հաղթանակը  
լրիվ ապահովություն և լինտերվենցիայի,  
նշանակում ե և ուստավրացիայի փոր-  
ձերից, վորովինետև ուստավրացիայի վո-  
րեվել լուրջ փորձը կարող է տեղի ունե-  
նալ միայն դրսից լուրջ ոգնություն լի-  
նելու դեպքում, միայն միջազգային կա-  
պիտալի ոգնության դեպքում։ Այդ պատ-  
ճառով ել բոլոր յերկրների բանվորների

կողմից մեր հեղափոխությանն սժանդակելը, իսկ յեփս առավել այդ բանվորների հաղթանակը, թեկուզ մի քանի յերկրներում, հանդիսանում ե առաջին հաղթանակած յերկրն ինտերվենցիայի և ուստավրացիայի փորձերից լիովին ապահովելու անհրաժեշտ պայմանը, սոցիալիզմի վերջնական հաղթանակի անհրաժեշտ պայմանը» («Լենինիզմի հարցերը», 1937 թ. եջ 134):

Իսկապես, ծիծաղելի և հիմարություն կլիներ փակել աչքերը կապիտալիստական շրջապատման փաստի առաջ և մտածել, փորձեր արտաքին թշնամիները, որինակ՝ ֆաշիստները, չեն փորձի հարմար դեպքում ուղղմական հարձակում կատարել ԽՍՀՄ վրա: Այդպես կարող են մտածել միայն կույր պարծենկուտները կամ ըողարկված թշնամիները, վորոնք ուղղում են քննեցնել ժողովրդին: Վոչ պակաս ծիծաղելի կլիներ ժխտել, վոր ուագնական ինտերվենցիայի ամենաշնչին հաջողության դեպքում ինտերվենտները կփորձեն քանդել իրենց գրաված ույոններում խորհրդային իրավակարգը և վերականգնել բուրժուական իրավակարգը:



Միթե Դենիկինը կամ Կոլչակը չելին վերականգնում իրենց զրաված սայոններում բուրժուական իրավակարգը ինչոք են Փաշիստները լավ Դենիկինից կամ Կոլչակից ժխտել ուղղմական ինտերվենցիայի և ուստավրացիայի փորձերի վտանգը կապիտալիստական շրջապատման գոյության պայմանում կարող են միայն քյալաղյոզները կամ քողարկված թշնամիները, վորոնք աշխատում են պոռատախոսությամբ ծածկել իրենց թշնամությունը և աշխատում են զորացրել ժողովրդին: Բայց կարելի յե արդյոք սոցիալիզմի հաղթանակը մի յերկրում համարել վերջնական, յեթե այդ յերկիրն իրշուրջն ունի կապիտալիստական շրջապատում և յեթե նա լիովին յերաշխիք չունի ինտերվենցիայի և ուստավրացիայի վտանդից: Պարզ ե, վոր չի կարելի:

Այդպես ե զործը մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի նկատմամբ:

Դուրս ե գալիս, զոր այդ հարցը պարունակում ե յերկու տարրեր պլորեմներ՝ ա) մեր յերկրի Ներքին հարաբերությունների պրոբլեմը, այսինքն՝ մեր բուրժուական հաղթելու և լրիվ սոցիալիզմ կառուցելու

պրոբլեմը, և բ) մեր յերկրի ԱՐՏԱՔԻՆ հա-  
րաբերությունների պրոբլեմը, այսինքն՝ մեր  
յերկիրը ռազմական ինտերվենցիայի և ռես-  
տավրացիայի վտանգներից լիովին ապահո-  
վելու պրոբլեմը։ Առաջին պրոբլեմն արդեն  
մենք լուծել ենք, վորովհետև մեր բուրժուա-  
զիան արդեն վերացված է և սոցիալիզմն  
արդեն հիմնականում կառուցված է։ Դա  
կոչվում է մեզ մոտ սոցիալիզմի հաղթանակ  
կամ, ավելի ճիշտ, սոցիալիստական շինա-  
րարության հաղթանակը մի յերկրում։ Մենք  
կարող եյինք ասել, վոր այդ հաղթանակը  
հանդիսանում է վերջնական, յեթե մեր յեր-  
կիրը գտնվեր կղզու վրա և յեթե նրա շուր-  
ջը չլինեյին բազմաթիվ ուրիշ կապիտալիս-  
տական յերկրներ։ Բայց քանի վոր մենք ապ-  
րում ենք վոչ թե կղզու վրա, այլ «պետու-  
թյունների սխտեմում», վորոնց զգալի մասը  
թշնամական վերաբերմունք ունի դեպի սո-  
ցիալիզմի յերկիրը, ստեղծելով ինտերվեն-  
ցիայի և ռեստավրացիայի վտանգը, ապա  
մենք ասում ենք բացարձակապես և ազնը-  
վորեն, վոր սոցիալիզմի հաղթանակը մեր  
յերկրում գեռ չի հանդիսանում վերջնական։  
Բայց դրանից հետեւում ե, վոր յերկրորդ

պրոբլեմն առայժմ չի լուծված և դեռ պետք  
է լուծենք այն։ Դեռ ավելին, յերկրորդ պրոբ-  
լեմն անհնարին է լուծել նույն կարգով, վոր  
կարգով վոր լուծել ենք առաջին պրոբլեմը,  
այսինքն՝ միայն մեր յերկրի սեփական ջան-  
քերով։ Յերկրորդ պրոբլեմը կարելի յե լու-  
ծել միայն միջազգային պրոետարիատի լուրջ  
ջանքերը վողջ մեր խորհրդային ժողովրդի  
ել ավելի լուրջ ջանքերին միացնելու կար-  
գով։ Պետք է ուժեղացնել և ամրացնել  
ԽՍՀՄ բանվոր դասակարգի միջազգային  
պրոլետարական կապերը բուրժուական յեր-  
կըրների բանվոր դասակարգի հետ, պետք ե  
կազմակերպել բուրժուական յերկրների բան-  
վոր դասակարգի քաղաքական ոգնությունը  
մեր յերկրի բանվոր դասակարգին՝ մեր յերկ-  
րի վրա ուղղմական հարձակում կատարե-  
լու դեպքում, ինչպես և կազմակերպել մեր  
յերկրի բանվոր դասակարգի ամեն ձեվի  
ոգնությունը բուրժուական յերկրների բան-  
վոր դասակարգին։ Պետք է ամեն կերպ ու-  
ժեղացնել և ամրապնդել մեր կարմիր բա-  
նակը, կարմիր նախատորմիդը, կարմիր ավիա-  
ցիան, Պաշը-ավիաքիմը։ Պետք է մեր վողջ  
ժողովուրդը պահել պատրաստված գորահա-



վաքային վիճակում ռազմական հարձակման վտանգի հանդեպ, վորպեսզի վոչ միշտատահականություն» և մեր արտաքին թշնամիների վոչ մի ֆոկուսներ չկարողանան մեզ հանկարծակի բերել...

Զեր նամակից յերեվում ե, վոր ընկեր Ուրոժենկոն ուրիշ, վոչ բոլորովին լենինյան տեսակետներ ունի: Նա, բանից դուրս ե գալիս, պնդում ե, վոր «մենք հիմա ունենք սոցիալիզմի վերջնական հաղթանակ և լրիվ ապահովություն ունենք ինտերվենցիայից և կապիտալիզմի ռեստավրացիայից»: Կասկած չի կարող լինել, վոր ընկեր Ուրոժենկոն արմատապես անիրավացի յե, Ընկեր Ուրոժենկոյի այդպիսի պնդումը կարող ե բացատրվել միայն շրջապատող իրականությունը չհասկանալով և լենինիզմի տարրական դրույթները չիմանալով, կամ թե չե մնապարծ յերիտասարդ աստիճանավորի դատարկաբանական պարձենկուությամբ: Յեթե մենք իսկապես ըլրիվ յերաշխիք ունենք ինտերվենցիայից և կապիտալիզմի ռեստավրացիայից», ապա դրանից հետո հարկավճր են արդյոք մեզ ուժեղ կարմիր բանակ, կարմիր նախատորմիդ, կարմիր ավիացիա,

ուժեղ Պաջը ավիաքիմ, միջազգային պըռետարական կապերի ուժեղացում և ամբապընդում: Ավելի լավ չե՞լինի արդյոք Կարմիր բանակի ուժեղացման վրա միլիարդներով ծախսվող դրամները ծախսել ուրիշ կարիքների վրա, իսկ Կարմիր բանակը կրծատել մինչև նվազագույնը կամ նույնիսկ բոլորովին ցըել: Այդպիսի մարդիկ, ինչպես ընկեր Ուրոժենկոն ե, յեթե նրանք սուբյեկտիվորեն նույնիսկ նվիրված են մեր գործին, որյեկտիվորեն վտանգավոր են մեր գործի համար, քանի վոր նրանք իրենց պարծենկոտությամբ կամա կամ ակամա (գա միենույն ե), ընեցնում են ժողովուրդը, զորացրում են բանվորներին ու գյուղացիներին և ողնում են թշնամիներին՝ հանկարծակի բերել մեզ միջազգային բարդությունների դեպում:

Ինչ վերաբերում ե այն բանին, ընկեր իվանով, վոր Զեզ, բանից դուրս ե գալիս, «հանել են պրոպագանդիստական աշխատանքից և հարց են դրել Զեր Կոմյեյերիտմիության մեջ մասլու մասին», ապա Զեզ այդ բանից վախենալ չի հարկավոր: Յեթե ՀԱՄԼԿՅԵՄ մարդկումի մարդիկ իսկապես

ուղենան նմանվել Զեխովի յենթասպա Պրի-  
շբեյեվին, կարելի յե չկասկածել, վոր նրանք  
տանու կտան այդ գործում: Մեր յերկրում  
չեն սիրում Պրիշբեյեվներին,

Հիմա դուք կարող եք դատել, հնացել եւ  
արդյոք «Ենինիզմի հարցերը» գրքի հայտնի  
տեղը՝ մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի  
հարցի նկատմամբ: Յես ինքս ել շատ կու-  
գեյի, վորպեսզի հնացած լինեք նա, վոր-  
պեսզի Ալինելին այլևս աշխարհում այն-  
պիսի անախորժ բաներ, ինչպես կապիտալիս-  
տական շրջապատռմը, ուազմական հար-  
ձակման վտանգը, կապիտալիզմի ուստավ-  
րացիայի վտանգը և այլն: Բայց դժբախտա-  
բար այդ անախորժ բաները դեռևս շարու-  
նակում են գոյություն ունենալ:

### Ի. ՍԱԼԻՆ

1938 թ. փետրվարի 12

«Պրակտա» 1938 թ. փետրվարի 14, № 44 (7369)



ՀՀ Ազգային գրադարան



NL0186018

Число 15 Цена  
15 цент.  
коп.

4 2464

86

6.3.2205

Письмо Т. ИВАНОВА

и 2000-30  
ответ Т. СТАЛИНА

(На армянском языке)

---

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ  
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО  
“БОЛЬШЕВИК”

Ростов-Д., Ворошиловский пр., 27